ԵԴ2/17192/02/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

03 օգոստոսի 2023թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (այսուհետ նաև՝ Դատարան) դատավոր Լ. Սաղոյանս, ծանոթանալով «ԷՅԲԻԷՖ» ՍՊ ընկերության հայցադիմումին և դրան կից փաստաթղթերին,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«ԷՅԲԻԷՖ» ՍՊ ընկերության անունից 20.07.2023 թվականին հայցադիմում է ներկայացվել դատարան ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից վերջինիս և «ԷՅԲԻԷՖ» ՍՊ ընկերության միջև 18.01.2023թ. կնքված թիվ «ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-22-23/105-1-06-23» ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Հայցադիմումի հիման վրա կազմված գործը դատավորի աշխատակազմին է հանձնվել 24.07.2023 թվականին:

Դատարանի 2023 թվականի հուլիսի 26-ի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է՝ թերությունները վերացնելու և հայցադիմումը կրկին ներկայացնելու համար 3-օրյա ժամկետի տրամադրմամբ:

Հայցադիմումը կրկին ներկայացվել է 27.07.2023 թվականին՝ հայցադիմումի վերադարձման համար հիմք հանդիսացած թերությունները շտկված:

Կրկին ներկայացված հայցադիմումը դատավորի աշխատակազմին է հանձնվել 31.07.2023 թվականին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ

սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

Քննության առնելով կրկին ներկայացված հայցադիմումը, ուսումնասիրելով կից ներկայացված փաստաթղթերը՝ Դատարանը գտնում է, որ հայցադիմումը համապատասխանում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի պահանջներին, առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ հայցադիմումը վերադարձնելու հիմքեր:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ, 234.6-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

«ԷՅԲԻԷՖ» ՍՊ ընկերության հայցադիմումն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից վերջինիս և «ԷՅԲԻԷՖ» ՍՊ ընկերության միջև 18.01.2023թ. կնքված թիվ «ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-22-23/105-1-06-23» ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունել վարույթ և համարել Դատարան ներկայացված սկզբնական ներկայացման օրը՝ 20.07.2023թ.-ին:

Եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր նշանակել 2023 թվականին սեպտեմբերի 14-ին՝ ՀՀ դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում:

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ **Լ. ՍԱՂՈՅԱՆ**

ԼԻԼԻԹ ՍԱՂՈՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐ